ՏՆԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ ՍՏԱՑՈՂԻՆ՝ ՏՐԱՄԱԴՐՈՂԻ ԱՆԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏՐԱՄԱԴՐՈՂԻ ՀՐԱԺԱՐՄԱՆ ԱՆՎԱՎԵՐ ԽՆԴՐԱԳՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԾԱՆՈՒՑՈՄ

(ADDRESSEE)

ՎԱՐՉԱՇՐՋԱՆ՝ _____

Ծանուցման ամսաթիվ՝ _____

Տրամադրողի անուն՝ _____

IHSS մնրասենյակի հասցե՝ _____

IHSS մնրասենյակի հեռախոսահամար՝ _____

Ուղղված՝ Տնային աջակցության ծառայությունների (IHSS) ստացողին

_____-ին, Ձեզ ծանուցվել է, որ համաձայն նահանգային օրենքի*, _____,
(ԱՄՍԱԹԻՎ) (ԹԵԿՆԱԾՈՒ ՏՐԱՄԱԴՐՈՂ)

այն անձը, որին ընտրել եք որպես Ձեր IHSS-ի տրամադրող, ճանաչվել է անիրավունակ, որովհետեւ նա վերջին 10 տարիների ընթացքում դատապարտվել է որակազրկող հանցագործության համար: Ծանուցմամբ տեղեկացվել է, որ եթե ցանկանում եք, որ նա լինի Ձեր տրամադրողը, չնայած այն բանին, որ դատապարտվել է որակազրկող հանցագործության համար, ապա պետք է վարչաշրջանի/պետական մարմնի (PA)/շահույթ չհետապնդող կոնսորցիումի (NPC) IHSS-ի գրասենյակին ներկայացնեք ստորագրված խնդրագիր տրամադրողի հրաժարման մասին:

_____-ին, վարչաշրջանի/PA-ի/NPC-ի IHSS ծրագրի գրասենյակը ստացել է
(ԱՄՍԱԹԻՎ)
տրամադրողի հրաժարման մասին անվավեր խնդրանք: Հրաժարման խնդրանքը անվավեր է, քանի որ այն ստորագրված է _____-ի կողմից՝ որպես Ձեր
(ԹԵԿՆԱԾՈՒ ՏՐԱՄԱԴՐՈՂԻ ԱՆՈՒՆ)
լիազոր ներկայացուցիչ: Նահանգային օրենքը* չի թույլատրում Ձեր լիազոր ներկայացուցչին ստորագրել հրաժարման խնդրագիրը՝ Ձեր տրամադրողը դառնալու նպատակով, եթե նա չի հանդիսանում Ձեր.

- Ծնողը, խնամակալը կամ իրավական խնամակալություն ստանձնած անձը (եթե անչափահաս եք), կամ
- Խնամակալը, ամուսին/կինը կամ գրանցված տնային զուգընկերը (եթե չափահաս եք):

Վարչաշրջանի/PA-ի/NPC-ի տվյալները ցույց են տալիս,որ _____-ը
(ԹԵԿՆԱԾՈՒ ՏՐԱՄԱԴՐՈՂԻ ԱՆՈՒՆ)

ՉԻ հանդիսանում Ձեր ծնողը, խնամակալը կամ իրավական խնամակալություն ստանձնած անձը (եթե անչափահաս եք), կամ Ձեր խնամակալը, ամուսին/կինը կամ գրանցված տնային զուգընկերը (եթե չափահաս եք): Եթե նա Ձեր ծնողը, խնամակալը կամ իրավական խնամակալություն ստանձնած անձն է (եթե անչափահաս եք) կամ Ձեր խնամակալը, ամուսին/կինը կամ գրանցված տնային զուգընկերն է (եթե չափահաս եք), զանգահարեք IHSS-ի Ձեր աշխատակցին՝ սույն ծանուցման վերեւում նշված հեռախոսահամարով:

Եթե այնուամենայնիվ ցանկանում եք, որ _____-ը լինի Ձեր տրամադրողը,
(ԹԵԿՆԱԾՈՒ ՏՐԱՄԱԴՐՈՂԻ ԱՆՈՒՆ)
կարող եք կամ.

- Ինքներդ ստորագրել կից հրաժարման փաստաթուղթը, եթե կարող եք, կամ
- Այլ անձնավորության նշանակել Ձեր լիազոր ներկայացուցիչ, որի չլինի Ձեր տրամադրողը եւ խնդրել նրան ստորագրել Տրամադրողի հրաժարման մասին ստացողի խնդրագիրը (SOC 862 ձեւաթուղթը):

Հրաժարման խնդրագիրը ստորագրելուց հետո այն պետք է վերադարձնեք վարչաշրջանի/PA-ի/NPC-ի IHSS-ի ծրագրի գրասենյակ՝ անձամբ կամ նամակով:

Եթե տվյալ անձը Ձեզ ծառայություններ է մատուցում՝ առանց վավեր հրաժարման փաստաթղթի առկայության, ապա Դուք եք կրում պատասխանատվությունը նրան Ձեր անձնական միջոցներից վճարելու համար՝ նրա մատուցած ցանկացած ծառայությունների դիմաց:

Որպես այլընտրանք՝ կարող եք որպես Ձեր տրամադրող ընտրել այլ անձի: Եթե տրամադրող գտնելու հարցում օգնության կարիք ունեք, զանգահարեք՝ _____:

Եթե հարցեր ունեք սույն ծանուցման վերաբերյալ, ապա զանգահարեք IHSS-ի Ձեր աշխատակցին՝ սույն ծանուցման առաջին էջի վերեւում նշված հեռախոսահամարով:

*Բարեկեցության եւ ինստիտուտների մասին օրենսգրքի 12305.87-րդ բաժին